ArmEnic
National Information Center for
Academic Recognition and Mobility

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2025
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2026

«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս.Հայոցյան. _____

23 հունվարի 2026թ.

2025 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրենի խոսքը

Օտարերկրյա որակավորումների ճանաչումը բարձրագույն կրթության հասանելիության ապահովման, ներառականության և շարժունության հիմնական տարրն է, և ճանաչման կոնվենցիաները կարևորագույն նշանակություն ունեն արդարության և խտրականության բացառման հարցում:

Որակավորումների արդար ճանաչումը խթանելու նպատակով և ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձր հովանո տակ, աշխարհի յուրաքանչյուր տարածաշրջան մշակել է օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիա, իսկ 2023 թվականին ուժի մեջ մտավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլոբալ ճանաչման կոնվենցիան:

Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ վերջին երկու տասնամյակում աշխարհում բարձրագույն կրթություն ստացող ուսանողների թիվը կտրուկ աճել է՝ հասնելով 235 միլիոնի, իսկ միջազգային ուսանողների թիվը եռապատկվել է՝ հասնելով 6 միլիոնի: Ուսանողների, շրջանավարտների և մասնագետների կարիքները բավարարելու համար որակավորումների ժամանակին, արդար և թափանցիկ ճանաչման անհրաժեշտության հետ մեկտեղ, աշխարհի բարձրագույն ուսումնական հաստությունները բախվում են բազմաթիվ փոփոխությունների և մարտահրավերների: Դրանց թվում են թվային փոխակերպման և բարձրագույն կրթության մեջ արհեստական բանականության կիրառման հետ կապված հնարավոր ռիսկերն ու հնարավորությունները:

Միջազգային ակադեմիական հանրությունը ներկայումս ակտիվորեն քննարկում է արհեստական բանականության և ճանաչման փոխհարաբերությունը՝ շեշտադրելով մի քանի հիմնական տարրեր՝ մարդակենտրոն գնահատումը, ճանաչման հուսալի գործընթացը, որի հենքը կազմում է վստահելի տվյալների կառավարումը, հետազոտության և նորարարությունների կարևորությունը, արհեստական բանականության ոլորտում գրագիտությունը և ուսուցումը, համագործակցություն ներառյալ ցանցայինը: Անշուշտ թվարկված գործոնները խթանում են արհեստական բանականության կիրարկումը էթիկական, մարդակենտրոն և որակյալ ճանաչման գործընթացում:

ԱՓՇԱՏԿ-ի համար անցած տարին հագեցած էր հետաքրքիր ծրագրերով, նոր նախաձեռնություններով, ուսումնասիրություններով ու հանդիպումներով, որոնց հիմքում ընկած է փոխվստահությունը: Համագործակցությունը տեղական և արտասահմանյան կառույցների և գործընկերների հետ ընդլայնվել է: Ընդհանուր առմամբ ԱՓՇԱՏԿ-ը, անշուշտ, իր գործունեությունը ծավալում է ազգային և եվրոպական բարձրագույն կրթության ռազմավարական զարգացումների համատեքստում՝ անմաս չմնալով գլոբալ զարգացման միտումներից:

Գայանե Հարությունյան

1. Տեղեկատվության տրամադրում տեղական և արտասահմանյան գործընկերներին

2025թ. ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իրականացնել իր հիմնական գործառույթները՝ օտարերկրյա որակավորումների գնահատում, խորհրդատվության ու տեղեկատվության տրամադրում կրթական համակարգերի և շնորհված որակավորումների, դրանց վերջնարդյունքների, ակադեմիական և մասնագիտական իրավունքների վերաբերյալ:

ԱՓՇԱՏԿ-ի *շահառուներն են* անհատները, տեղական և արտասահմանյան պետական և մասնավոր կառույցները, մասնագիտական հասարակական կազմակերպությունները, հավատարմանգրման գործակալությունները, ուսումնական հաստատությունները:

2025թ. ընթացքում շարունակվել է ԱՓՇԱՏԿ-ի սերտ համագործակցությունը պետական մարմինների, գործատուների և արտասահմանյան կառույցների հետ՝ տրամադրելով խորհրդատվություն և տեղեկատվություն ազգային կրթական համակարգերի, ուսումնական հաստատությունների կարգավիճակի, հին ու նոր որակավորումների և դրանց իսկության, գիտելիքների գնահատման և կրեդիտային համակարգերի վերաբերյալ: Կենտրոնի միջազգային գործընկերների շրջանակը ընդգրկում է ENC-NARIC, APNNIC և TAICEP ցանցերը, տարբեր երկրների միգրացիոն ծառայությունները, դեսպանությունները, կրթական փաստաթղթերի իսկությունը հավաստող օտարերկրյա գործակալությունները, առողջապահության և այլ կանոնակարգվող մասնագիտությունների համար լիազոր մարմինները, բուհերը և այլ հաստատություններ:

2025թ.ին գործերի ընդհանուր քանակը կազմել է **3308՝** գրանցելով 22.5% աճ նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ: Ուսումնասիրված որակավորումների, ինչպես նաև հայկական որակավորումների վերաբերյալ հարցումների աշխարհագրությունը բավականին լայն է:

Պատկեր 1-ում ներկայացված է ՀՀ ազգային կրթական համակարգի և ազգային (հին ու նոր) որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը՝ ըստ երկրների:

Պատկեր 1. ***ՀՀ կրթական համակարգի և որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը ըստ երկրների***



2025թ. կենտրոնի կողմից գնահատված որակավորումների գերակշռող մասը ստացվել են ՀՀ պետական կառույցներից (69 %): Ինչ վերաբերում է արտասահմանյան կառույցների կողմից հայցվող որակավորումների մասին տեղեկատվությանը, ապա մեծ թիվ են կազմել Վրաստանից ստացված հարցումները՝ 23%, ՌԴ-ից ստացված հարցումները կազմել են 12 %, որոնք հիմնականում վերաբերվում են միջին մասնագիտական որակավորումներին: Ֆրանսիայից ստացված հարցումները կազմել են 11%, ընդ որում դրանց գերակշռող մասը Արցախից տեղահանված փախստականների որակավորումների ճանաչման վերաբերյալ են եղել: Կարևոր նշել, որ արտասահմանյան կառույցների կողմից հայցվող տեղեկատվությունը հիմնականում վերաբերում է կանոնակարգվող մասնագիտություններին՝ մանկավարժական և միջին մասնագիտական բժշկական, ճարտարագիտական և իրավաբանական որակավորումների ճանաչմանը:

2025 թվականին ԱՓՇԱՏԿ ներկայացված օտարերկյա որակավորումների աշխարհագրությունը նույնպես ընդլայնվել է՝ ներառելով լատինամերիկյան և աֆրիկյան երկրներ՝ Արգենտինա, Բենինը, Սուդան, Նիգերիա և այլն: Ստորև ներկայացված Պատկեր 2-ում արտացոլված են գնահատված որակավորումները ըստ երկրների: Պատկերից 2-ից երևում է, որ գնահատված օտարերկրյա որակավորումների զգալի մասը շարունակում են կազմել ՌԴ-ում շնորհված որակավորումները (59%): Համեմատաբար մեծ թիվ են կազմում Ուկրաինայի (6%), Լիբանանի (6%), ԱՄՆ-ի (6%), Ֆրանսիայի (5%), Սիրիայի (5%), Գերմանիայի (4%), Իրանի (4%), Իսրայելի (4%), Իսպանիայի (4%) որակավորումները: Այլ երկրների թվում են Դոմինիկյան Հանրապետությունը, Նիգերիան, Եգիպտոսը, Ղրղզստանը, Սուդանը, Ֆիլիպինները, Տաջիկստանը և այլն:

Պատկեր 2. ***Օտարերկրյա որակավորումների աշխարհագրությունը***



2025թ. ԱՓՇԱՏԿ-ը սերտ համագործակցել է ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմն հետ՝ տրամադրելով օտարերկրյա բժշկական որակավորումների ճանաչման վերաբերյալ տեղեկատվություն:

Շարունակվել է համագործակցությունը ENIC-NARIC ցանցերի կենտրոնների հետ: ԱՓՇԱՏԿ-ը, հանդիսանալով ENIC-NARIC, APNNIC և TAICEP ցանցերի անդամ, ակտիվորեն մասնակցում է ցանցերում ծավալվող քննարկումներին, հարցումներին և ուսումնասիրություններին, որոնք վերաբերում են ճանաչման արդի խնդիրներին և ազգային փորձառությանը: Մասնավորապես, հաշվետու տարվա ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- միջին մասնագիտական որակավորումները և դրանց ակադեմիական հնարավորությունները,
- սլավոնական երկրների բուհերի կողմից շնորհված որակավորումների ճանաչումը,
- Ուկրաինայի ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչումը,
- դիպլոմ արտադրող ուսումնական հաստատությունները և հավատարմագրման գործակալությունները:

2. Օտարերկրյա որակավորումների գնահատում և խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

ԱՓՇԱՏԿ-ը խորհրդատվական տեղեկանքներ է տրամադրում հայկական և օտարերկրյա որակավորումներ ունեցող անհատներին՝ ակադեմիական և/կամ աշխատանքային շարժունությունը խթանելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնի կողմից տրամադրված խորհրդատվական տեղեկանքների թիվը կազմել է 905,՝ որը ընդհանուր գործերի 27.3 %-ն է:

Պատկեր 3-ում ներկայացված է տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների՝ համաձայն որի 2025թ.-ին նույնպես կենտրոնի ստացած հարցումների գերակշռող մասը եղել է տեղական կառույցներից (69 %):

Պատկեր 3. ***Տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների***



2025թ. ԱՓՇԱՏԿ-ի կողմից կրթական որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության զգալի մասը եղել է ՀՀ բարձրագույն կրթական որակավորումների վերաբերյալ, մասնավորապես 55% եղել են բակալավրի որակավորումներ: Տեղեկատվության զգալի մասը հայցվել է ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից՝ աշխատանքի անցնելու կամ աշխատանքում առաջխաղացման նպատակով, ինչպես նաև ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից՝ բժշկական հաստատություններում իրականացվող ստուգումների հետ կապված:

Պատկեր 4-ը արտացոլում է կենտրոնի կողմից տրամադրված խորհրդատվությունը՝ ըստ որակավորումների մակարդակի:

Պատկեր 4. ***Խորհրդատվության տրամադրում ըստ որակավորումների***



Տվյալների ուսումնասիրությունը ըստ մասնագիտությունների տրամադրված տեղեկատվության բերված է Պատկեր 5-ում, որից երևում է, որ զգալի մաս են կազմում իրավագիտություն մասնագիտությամբ որակավորումները՝ 505 որակավորում: Մեծ թիվ է կազմել առողջապահության (484), մանկավարժության (494) և ճարտարագիտության (357) ոլորտում շնորհված որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը:

Պատկեր 5. ***Տեղեկատվություն ըստ մասնագիտությունների***



Հիմնական վիճակագրական տվյալներ

Ամփոփելով 2025 թվականի ընթացքում է արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.

- ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է **3308՝** նախորդ տարվա նկատմամբ ցուցանիշը աճել **է 22.5%,**
- գրավոր խորհրդատվությունների մոտ **73%-ը** կազմել են տեղական և արտասահմանյան կառույցներից ստացված հարցումները,
- անհատներին և կազմակերպություններին տրամադրված վճարովի խորհրդատվական տեղեկանքների թիվը կազմել է **905՝** նախորդ տարվա համեմատ աճելով **42.3%:**
- բացահայտվել են կրթական փաստաթղթերի **կեղծման 46 դեպք** և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է իրավապահ մարմիններին: Բացահայտված կեղծիքների ճնշող մեծամասնությունը բժշկական և ճարտարագիտական որակավորումներ են:

3. Միջազգային ծրագրեր, նախաձեռնություններ

3.1 Փախստականների որակավորումների եվրոպական անձնագիր (ՓՈԵԱ)/European Qualifications Passport for Refugees (2018-2025) [1]

2025թ. ՓՈԵԱ ծրագիրը, որը իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից, շարունակել է կազմակերպել առցանց ուսուցումներ գնահատման մասնագետների համար: Փետրվար- մարտ ամիսներին կենտրոնի երկու գնահատման մասնագետները մասնակցել են այդ ուսուցումներին, որոնք կազմված էին երկու փուլից: Ուսուցման ընթացքում ներկայացվել են փախստականների որակավորումների գնահատման մեթոդաբանությունը և գործիքակազմը, տարբեր երկրների փորձը և գնահատման սեսիաների ընթացքում առաջացող խնդիրները:

3.2. «Միկրո-որակավորումները Վրաստանի և Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերում»/Micro-Gear(2024-2026)

2024 թվականին մեկնարկեց MICRO-GEAR- Էրասմուս+ ծրագիրը, որի նպատակն է խթանել միկրո-որակավորումների կիրարկումը որպես բարձրագույն կրթության համապատասխանության, որակի և ճկունության բարելավման գործիք:

Համաձայն Եվրոպական խորհրդի միկրո-որակավորումների վերաբերյալ երաշխավորության՝ կարճատև դասընթացները կարևոր են շարունակական կրթության և զբաղվածության համար՝ հաշվի առնելով արդի զարգացումները: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվելու է ազգային օրենսդրությունը՝ առաջարկելով միկրո-որակավորումների կիրարկման համար անհրաժեշտ իրավական լրամշակումներ, որոնց արդյունքում նախատեսվում է վերանայել որակավորումների ազգային շրջանակը և մշակել պիլոտային ծրագրեր: 2025 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կազմակերպվել են մի քանի միջոցառումներ, որոնց մասնակցել են կենտրոնի բոլոր գնահատման մասնագետները:

3.3. «Բարձրագույն կրթության մուտքի որակավորումների ավտոմատ ճանաչման ուղիներ2»/ARAQUA2 (01.08.2025-31.07.2027)

«Բարձրագույն կրթության մուտքի որակավորումների ավտոմատ ճանաչման ճանապարհ 2» (ARAQUA 2) նախագծի նպատակն է ընդլայնել ծրագրի գործընկեր երկրներում բարձրագույն կրթության (ԲԿ) մուտքի որակավորումների ուսումնասիրությունը՝ այդ որակավորումները ավտոմատ ճանաչման համար քարտեզագրելու և ARAQUA-ում մշակված ավտոմատ ճանաչման վերաբերյալ առաջարկությունների և ԲԿ մուտքի որակավորումների ավտոմատ ճանաչման գործնական իրականացմանը նպաստող այլ գործիքների կիրառումը ընդլայնելու համար: Ծրագրի առումով, ԲԿ մուտքի որակավորումները ներառում են ինչպես ընդհանուր, այնպես էլ միջին մասնագիտական որակավորումներ, որոնք հնարավորություն են տալիս շարունակել ուսումը բարձրագույն կրթությունում: Ծրագրի հիմնական նպատակներն են՝ ծրագրի գործընկեր երկրներում ԲԿ մուտքի որակավորումները քարտեզագրել ARAQUA նախագծում սահմանված չափանիշների՝ ավտոմատ ճանաչմանը դրանց համապատասխանությունը գնահատելու համար: Նաև ծրագրի երկրորդ փուլի նպատակն է պարզեցնել առաջարկությունների կիրարկումը և ուսումնասիրել ավտոմատ ճանաչումը խթանող այլ գործիքներ:

Ծրագրի մեկնարկային հանդիպում տեղի է ունեցավ 24.10.2025թ. Ռիգայում, որը համակարգվում էր Լատվիայի Ակադեմիական տեղեկատվական կենտրոն: Հանդիպմանը

[1] https://www.coe.int/en/web/education/recognition-of-refugees-qualifications

առցանց մասնակցում էին ԱՓՇԱՏԿ-ի երկու մասնագետներ: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին նախագծի հիմնական նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները: Մասնակիցները քննարկեցին գործընկեր երկրներում բարձրագույն կրթության մուտքի որակավորումների քարտեզագրման գործընթացը՝ հիմք ընդունելով ARAQUA նախագծում (2022–2024) սահմանված չափանիշները, ինչպես նաև համաձայնեցին հետագա քայլերի և համագործակցության ձևաչափերի վերաբերյալ:

3.4. «Պայքար կեղծարարության դեմ. ընդհանրական մոտեցումներ և տվյալների հավաքագրում» FRAUD-ACT (01.08.2025-31.07.2028)

Կեղծարարությունը կրթության ոլորտում գլոբալ երևույթ է, որը ազդում է կրթության բոլոր մակարդակների վրա: Այդ երևույթները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ կեղծ փաստաթղթերի ստեղծում և բարձրագույն կրթական ծառայությունների մատուցում չհավատարմագրված հաստատությունների կողմից, ինչպիսիք են «դիպլոմների գործարանները» կամ «էսսեներ, թեզեր գեներացնող գործարանները»: «Պայքար կեղծարարության դեմ. ընդհանրական մոտեցումներ և տվյալների հավաքագրում» (Fraud-Act) ծրագրի հիմնական նպատակն է պայքարել կրթության ոլորտում կեղծարարության երևույթների դեմ՝ մշակելով ընհանրական մոտեցումներ ԵԲԿՏ-ի համար, որոնք ուղղված են կրթության որակի բարելավմանը՝ համաձայն 2023 Տիրանայի կոմյունիկեի: Ծրագիրը ուսումնասիրելու է չորս ոլորտներ, որոնք կապված են կրթական կեղծարարության կանխարգելման, պայքարի տարբեր մեթոդների և մոնիթորինգի՝ հիմնվելով միջազգային համագործակցության և նորարարության վրա: Ծրագրի մեկնարկային հանդիպում տեղի ունցավ 30.10.2025-ին Փարիզում:

4. Տոկիոյի ճանաչման կոնվենցիա և APNNIC ազգային տեղեկատվական կենտրոնների ցանցը

Տոկիոյի ճանաչման կոնվենցիայի շրջանակներում զարգացումները բավականին դանդաղ են ընթանում: ԱՓՇԱՏԿ-ը հունիս ամսին Փարիզում մասնակցել է APNNIC-ի նորընտիր բյուրոյի հանդիպմանը՝ քննարկելու հաջորդ երկու տարվա գործողությունների ծրագիրը: Կենտրոնի մասնագետները սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին նաև առցանց մասնկացել են «*Տոկիոյի և գլոբալ կոնվենցիաների կիրարկումը, որակավորումների ազգային շրջանակներ. Նոր Զելանդիայի և Ճապոնիայի փորձը*» առցանց հանդիպումներին:

5. Գլոբալ ճանաչման կոնվենցիա

2025 թվականի հունիսի 24-25 Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորության ներքո, տեղի ունեցավ Բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գլոբալ կոնվենցիայի(ԳՃԿ) մասնակից պետությունների 2-րդ միջկառավարական նիստը՝ հաստատելու բյուրոյի *աշխատանքային ծրագիրը* և միջկառավարական համաժողովի *Գործողությունների ընթացակարգային կանոնները*: Առ այսօր կոնվենցիան վավերացրել են 39 երկրներ:

Միջակառավարական նիստին հաջորդեց սեմինար՝ «*Ինչ ակնկալել միկրո-որակավորումներից բարձրագույն կրթության անընդհատ փոփոխվող միջավայրում*»:

Սեպտեմբեր ամսին կենտրոնը մասնակցել է «*Ինչպես գործարկել Գլոբալ կոնվենցիան*» վեբինարին: Կենտրոնը ներկայացուցիչը նասբնակցել է միջկառավարական համաժողովին և վեբինարին:

6. Աշխատաժողովներ, դասընթացներ ՀՀ բուհերի համար

Ավանդույթի համաձայն՝ դեկտեմբերի 5-ին ԱՓՇԱՏԿ-ը անցկացրեց սեմինար ՀՀ բուհերի համար՝ «Փախստականների որակավորումների ճանաչումը. Փախստականների եվրոպական որակավորումների անձնագիրը» թեմայով: Դասընթացին մասնակցում էին 17 բուհերի 22 ներկայացուցիչներ և դրա նպատակն էր խթանել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի արդյունավետ կիրարկումը՝ նպաստելով ճանաչման ինստիտուցիոնալ մշակույթի ձևավորմանը: Սեմինարի ժամանակ նբուհերի ներկայացուցիչները ծանոթացան Փախստականների Եվրոպական որակավորման անձնագրին՝ մեթոդաբանությանը և գործիքակազմին: Դասընթացի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեին գործնականում կիրառել ստացած գիտելիքները՝ իրական օրինակների վրա:

7. Ուսումնասիրությունների իրականացում և մասնակցություն այլ կենտրոնների կողմից իրականցված հետազոտություններին

ԱՓՇԱՏԿ-ը ընթացիկ տարում կատարել է ուսումնասիրություններ ՀՀ կրթական համակարգում օրենսդրական փոփոխությունների և լրամշակումների վերաբերյալ՝ տրամադրելով տեղեկատվություն իր արտասահմանյան գործընկերներներին: Մասնավորապես.

- ՀՀ հանրակրթական համակարգի վերաբերյալ Նորվեգիայի բարձրագույն կրթության դեպարտամենտին (Հավելված 1),
- ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5, 6, 7, և 8-րդ մակարդակների վերաբերյալ NUFFIC-ին՝ խթանելու որակավորումների ավտոմատ ճանաչումը,
- Շվեդական ազգային տեղեկատվական կենտրոնի և Գրոնինգեն ցանցի կողմից համատեղ անցակցվող հարցմանը՝ *թվային որակավորումների էկոհամակարգի կառավարման* վերաբերյալ:
- ՀՀ ՈԱՇ-ի հինգերորդ մակարդակի որակավորումների վերաբերյալ CHAINS ծրագրի ուսումնասիրությանը:

Նաև կենտրոնը եռամսյակի ընթացում մասնակցել է enic-naric ցանցերի անդամների կողմից իրականացվող հարցումներին, որոնք վերաբերվել են.

- դոկտորական ծրագրերի առանձնահատկություններին,
- միջոլորտային կրթական ծրագրերի ազգային փորձին,
- enic-naric ցանցերի գործունեությանը գլոբալ համատեքստում,
- ուսումնասիրվել են կանոնակարգվող մասնագիտությունները եվրոպական երկրներում և ինչպիսին են ազգային կարգավորումները յուրաքանչյուր մասնագիտության համար,
- Հնդկաստանի բուհերի կողմից շնորհված դիպլոմների իսկության ստուգման փորձը,
- կենտրոնի կողմից անհատներին տրվող խորհրդատվական տեղեկանքներում ներառվող տեղեկատվությունը:

- ԱՄՆ ազգային և ռեգիոնալ որակի ապահովման կենտրոնների կողմից հավատարմագրված ավագ դպրոցների կողմից շնորհված ավարտական փաստաթղթերի ճանաչման ազգային փորձառությանը:

8. ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը միջազգային համաժողովներին

2025թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի անձնակազմը մասնակցել է միջազգային հանդիպումների և միջոցառումների՝ ներկայացնելով կենտրոնի փորձը ճանաչման տարբեր հարցադրումների վերաբերյալ, իրականացվող ծրագրերը և այլն: Միջոցառումների մի մասի առցանց ֆորմատը հնարավորություն է տվել կենտրոնի բոլոր մասնագետներին մասնակցել բավականին մեծ թվով միջոցառումների: Վստահաբեր կարելի է ասել, որ 2025 թվականի միջոցառումների կարևոր թեմաներից են եղել վստահելի տեղեկատվության տրամադրումը, արդյունավետ հաղորդակցման մեխանիզմները, արհեստական բանականության դերը որակավորումների ճանաչման գործընթացներում: Ստորև ներկայացված են առավել կարևոր միջոցառումները.

Ապրիլի 1-ին մասնակցել են Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպած քննարկմանը՝ *Տրանսազգային կրթության մարտահրավերներ* թեմայով:

Մայիսի 5-ին կենտրոնի տնօրենը մասնակցել է Երևանում կայացած ՄԿՈՒ համակարգում իրականցվող Beyond Europe with Micro-credentials ծրագրի համակարգման խմբի հանդիպմանը, որի ժամանակ ներկայացրել է միկրո-որակավորումների ճանաչման ընդհանրական սկզբունքները:

Մայիսի 12-ին գնահատման մասնագետները առցանց մասնակցել են Դիպլոմի հավելվածի կիրարկումը խթանելու համար ստեղծված եվրոպական ցանցի հերթական հանդիպմանը:

Մայիսի 24-27-ը գնահատման երեք մասնագետներ մասնակցել են enic-naric ցանցերի 32-րդ տարեկան համաժողովին, որը հյուրընկալում էր Ալբանիայի կրթության և սպորտի նախարարությունը՝ ի դեմս Ազգային տեղեկատվական կենտրոնի (Center for educational services/CES): Համաժողովին մասնակցում էին 137 գնահատման մասնագետներ ինչպես եվրոպական, այնպես աշխարհի այլ տարածաշրջաններից: Համաժողովին ներկա էին նաև Եվրահանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչները, ինչպես նաև Միջազգային բակալավրիատի, Եվրոպական ուսանողական միության, Եվրոպական համալսարանների ասոցիացիայի, Եվրոպական որակի ռեգիստրի և մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: 2024 թվականին Եվրոպայի խորհուրդը երկրորդ անգամ դրամաշնորհներ էր հատկացրել ոչ ԵՄ անդամ երկրների ազգային տեղեկատվական կենտրոններին և ընտրվել էին երեքը, որոնց թվում էր նաև ԱՓՇԱՏԿ-ի կողմից ներկայացված ծրագիրը փախստականների որակավորումների ճանաչման վերաբերյալ: Տարեկան համաժողովի ընթացքում բոլոր երեք կենտրոնները ներկայացրեցին իրենց կողմից իրականացված ծրագրերը և դրանց հիմնական արդյունքները:

Հունիսի 11-ին գնահատման մասնագետները առցանց մասնակցել են ETF-ի կողմից կազմակերպած՝ միջին մասնագիտական որակավորումների ճանաչման ընթացակարգերին և դրանց պարզեցման հնարավորությանը վերաբերող վեբինարին:

Հունիսի 18-ին կենտրոնի տնօրենը առցանց մասնակցել է ազգային տեղեկատվական կենտրոնների կողմից նախաձեռնությանը՝ մշակելու enic-naric ցանցերի համար ավտոմատ ճանաչման հարթակ:

Օգոստոսի 13-ին կենտրոնի տնօրենը առցանց մասնակցել է Գրոնինգեն դեկլարացիայի ցանցի կողմից կազմակերպած քննարկմանը «*Վստահություն, թվային որակավորումներ, և ԱԲ ազդեցությունը որակավորումների գնահատման և ճանաչման գործընթացներում*»:
Օգոստոսի 28-ին կենտրոնի 5 գնահատման մասնագետները մասնակցել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված «Գլոբալ և տարածաշրջանային կոնվենցիաների հնարավորությունները» թեմայով վեբինարին:
Սեպտեմբերի 11-ին կենտրոնի երեք գնահատման մասնագետներ մասնակցել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Համալսարանների միջազգային ասցիացիայի(IAU) կողմից կազմակերպած «Արհեստական բանականություն և բարձրագույն կրթություն» թեմայով վեբինարին:

9. Որակավորումների գնահատման փորձագետների միջազգային ասոցիացիային (TAICEP) անդամակցություն

2022 թվականից ԱՓՇԱՏԿ-ը անդամակցում է TAICEP-ին, որը միավորում է որակավորումների գնահատման փորձագետներին՝ ներկայացնող տարբեր երկրների բուհեր, գնահատման անկախ գործակալություններ, enic-naric կենտրոններ, լիցենզավորման և պետական մարմիններ, թեստավորման և քննական խորհուրդներ, որակավորումներ շնորհող կազմակերպություններ և այլն: TAICEP-ը փորձի և գիտելիքների փոխանակման հարթակ է՝ խթանելու ոլորտի շահերը և հնարավորություն է տալիս հաստատել ցանցային կապեր:

10. Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)/Բոլոնիայի գործընթաց

2025 թվականի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի տնօրենը մասնակցել է Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) Ճանաչման *TPG* թեմատիկ աշխատանքային խմբի, ինչպես նաև մյուս թեմատիկ խմբերի կողմից կազմակերպած համաժողովներին: Մասնավորապես.

- փետրվար և հունիս (առցանց) ամիսներին տեղի են ունեցել Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) Ճանաչման *TPG* թեմատիկ աշխատանքային խմբի հանդիպումները: Առաջին հանդիպման ժամանակ քննարկվել է Տիրանայի կոմյունիկեյի հանձնարարականների հիման վրա մշակված գործունեության ծրագիրը: Աշխատանքային խմբի հանդիպմանը նախորդել է TPG-LRC CORE-IN-Global ծրագրի ավարտական համաժողովը, որի ժամանակ ակադեմիական հանրությանը ներկայացվել են ծրագրի արդյունքները, որոնք վերաբերում են Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի հետագա կիրարկմանը ազգային մակարդակում, ավտոմատ ճանաչման հետ կապված զարգացումները, ինչպես նաև քննարկվել են աշխարհի մյուս տարածաշրջանների ներկայացուցիչների հետ որակավորումների ճանաչման հարցերը: Երկրորդ հանդիպման ժամանակ քննարկվել է ազգային օրենսդրության համապատասխանությունը կոնվենցիայի հիմնական սկզբունքներին:
- *Մարտ ամսին* Ռիգայում կենտրոնի տնօրենը մասնակցել է «*Որակավորումների ազգային շրջանակները վստահության, թափանցիկության և բազմազանության համար*» TPG A (QUATRA–TPG A) եզրափակիչ համաժողովի պանելային քննարկմանը Բոլոնիայի գործընթացի կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ:
- *Սեպտեմբերի 19-ին* Թբիլիսիում կենտրոնի տնօրենը PLA - ի ժամանակ խոսել է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի մասին՝ շեշտադրելով ուսումնառության վերջնարդյունքների դերը:

ԱՓՇԱՏԿ-ի տնօրենը որպես ավտոմատ ճանաչման աշխատանքային խմբի անդամ հուլիս, հոկտեմբեր (առցանց) և դեկտեմբեր (առցանց) ամիսներին մասնակցել է Եվրոպայի խորհրդի կողմից համակարգվող ավտոմատ ճանաչման աշխատանքային խմբի հանդիպումներին՝ նոր օրենսդրական փաստաթուղթ մշակելու համար:

11. Ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն

2025 թվականի ընթացքում Հիմնադրամի ֆինանսական գործունեությունն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից, վճարովի ծառայություններից, ավանդադրված գումարից ստացված տոկոսային եկամուտներից, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ներգրավված ֆինանսական միջոցների հաշվին՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը:

11.1.ՀՀ պետական բյուջեի միջոցների մուտքերն ու դրանց օգտագործումը

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեից Հիմնադրամին հատկացվել են հետևյալ միջոցները.

- «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ» ծրագրի շրջանակում՝ 43,113.5 հազար դրամ, որը ամբողջությամբ օգտագործվել է ծրագրային նպատակներին համապատասխան:
- Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին համաշխարհային կոնվենցիան վավերացրած պետությունների միջկառավարական երկրորդ համաժողովին մասնակցության նպատակով՝ 257.0 հազար դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

11.2. Այլ ֆինանսական միջոցների մուտքերն ու դրանց օգտագործումը

Այլ ֆինանսական միջոցների մուտքերն ու ելքերը կազմել են.

- վճարովի ծառայություններից ստացված մուտքերը՝ 7,619.7 հազար դրամ, իսկ նույն ժամանակահատվածում իրականացված ելքերը՝ 7,606.0 հազար դրամ:
- 2025 թվականին դրամաշնորհատուի կողմից փոխհատուցվել է 2024 թվականին «Փախստականների որակավորումների ճանաչման ազգային մեխանիզմների հզորացում» դրամաշնորհային ծրագրի համար վճարովի ծառայությունների միջոցներից իրականացված 2,503.58 եվրոյի ծախսը (կամ 1,072.5 հազար դրամին համարժեք), իսկ փոխարկման ծախսը կազմել է 18.6 հազար դրամ:
- 2024 թվականին ավանդադրված 7,000.0 հազար դրամ գումարից 2025 թվականին ստացված տոկոսային եկամուտը կազմել է 667.0 հազար դրամ:

11.3.Դրամաշնորհային ծրագրերի շրջանակում իրականացված գործունեություն

- «Միկրո-որակավորումները Վրաստանի և Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերում. Հարավային Կովկասի փարոս» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2025 թվականին իրականացված ծախսերը կազմել են 14,631.89 եվրո (համարժեք 6604.9 հազար դրամ):
- «Պայքար կեղծարարության դեմ. ընդհանրական մոտեցումներ և տվյալների հավաքագրում (Fraud-Act)» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2025 թվականին ստացվել է 6,756.15 եվրո (կամ 3,033.6 հազար դրամին համարժեք):

- «Բարձրագույն կրթության մուտքի որակավորումների ավտոմատ ճանաչման ուղիները 2 (ARAQUA 2)» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2025 թվականին ստացվել է 9,465.72 եվրո (կամ 4250,2 հազար դրամին համարժեք):

Նշված «Fraud-Act» և «ARAQUA 2» դրամաշնորհային ծրագրերի շրջանակում հաշվետու տարվա ընթացքում ծախսեր չեն իրականացվել: Ստացված միջոցների օգտագործումը նախատեսվում է հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններում:

Պատկեր 6. **2025թ. դրամական մուտքեր**



Համաձայն Պատկեր 6-ում ներկայացված տվյալների՝ Հիմնադրամի մուտքերի գերակշռող մասը՝ 72.3 %, ձևավորվել է ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների հաշվին, մինչդեռ վճարովի ծառայություններից և այլ աղբյուրներից ստացված մուտքերը կազմել են ընդհանուր մուտքերի 27.7 %: Պատկեր 7-ում բերված է՝ վճարովի ծառայություններից ստացված մուտքերը, որոնք գրանցել են 44.14 % աճ 2024 թվականի համեմատ:

Պատկեր 7. **Վճարովի ծառայություններից մուտքերը ըստ տարիների**



Հավելված 1

Armenian Education system and admission requirements

Overview of education system

Armenia is a landlocked country, situated in South Caucasus and fronting the northwestern extremity of Asia. To the north and east Armenia is bordering Georgia and Azerbaijan, while its neighbours to the southeast and west are Iran and Turkey. The capital is Yerevan. The current population of Armenia is **2,970,072** based on the latest United Nations data[2]. Due to high emigration rates as well as to socio-economic situation the population of the country is decreasing.
The South Caucasus region is distinguished for its ancient and rich cultural traditions that have served as a basis for diverse national education systems[3]. However, the region has for many centuries suffering from political and religious conflicts and wars. Especially, in the late 1980s and the beginning of 1990s all the Caucasian countries, like those of central and eastern Europe, underwent dramatic political changes which resulted in overall collapse of the communist regime and socialist economy which seriously challenged their education systems.

Since its independence in 1991 Armenia has gone a profound transformation struggling to reform its education system. Before 1991, the education system of Armenia was known as a strong one. Literacy rate was 100% and generally, education was free.
With introduction of market relations in education, private institutions were allowed to operate, resulting in growth of their number. Also, institutions become autonomous and more competitive. In 1997 the number of higher education institutions (HEI) reached 102 which negatively affected the overall education quality. Then, the number of HEIs decreased and it now stands at 61.

By the years the government support to HEIs has been decreasing and currently tuition fees remain practically the only source of income for HEIs. Funding constrains faced by HEIs create huge problems of development of institutions including quality of education, access and equity for students.
Thus, for several decades the main foci of the Ministry of education[4] remains new sustainable educational approaches for improving access, quality and equity of the education system.

Armenian education system consists of general secondary education (primary, basic and high school), vocational education, higher and postgraduate education. Compulsory education lasts 12 years from age 6 to age 17. Generally, the academic year begins in September and ends in May.
Higher and postgraduate education is regulated by the Law on Education (1999) and the Law on Higher and Postgraduate Education (2004) of the Republic of Armenia with main provisions in line with the assumed international obligations. The MoESCS is an authority which elaborates and implements the policies in education and science sectors on behalf of the Armenian Government.

---

[2] Worldometer. https://www.worldometers.info/world-population/armenia-population/

[3] The Lisbon Recognition Convention at 15: making fair recognition a reality, Council of Europe Higher education series No.19, 2014; pp.61-69
[4] Presetly, Ministry of education, Science, Culture and Sport (MoESCS)

